ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա, 26

Հեռ. 52-08-94 ֆաքս

«04» «07» 2014 թ.

Հ. [illegible]-599

ՀԱՐԳԵԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐ

(ըստ ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/12 ծածկագրով մրցույթի

շրջանակներում գրանցված կազմակերպությունների ցանկի)

«ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-11/12-76» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի հետ կնքված N ՇՀԱՊՁԲ-11/12 շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները: Մատակարարման պայմաններն են՝ մատակարարի տրանսպորտային միջոցներով:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով մինչև 2014թ. հուլիսի 15-ը, ժամը 14:30-ն:

Հայտերի բացումը տեղի կունենաէլեկտրոնային ձևով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով 2014թ. հուլիսի 15-ին, ժամը 14:30-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված

մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

*Հարգանքով՝*

Վ. Գրիգորյան